

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՐԻԱՄ ՄԱՆՎԵԼԻ

**ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐՈՊԱ ԶԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1990-ԱԿԱՆՆԵՐԻ
ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ**

**Ժ.01.06. - «Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Պետրոսյան Դավիթ Վլադիմիրի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Էդոյան Յենրիկ Անտոնի

բանասիրական գիտությունների
թեկնածու

Աբրահամյան Գոռ Մարգարեի

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան


Պաշտպանությունը կայանալու է 2015 թ. մարտի 18-ին՝ ժամը 14³⁰-ին, ԵՊՀ-ում
գործող՝ ԲՈՅ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ ք. Երևան 25, Աբովյան 52^ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի
մասնաշենք, թիվ 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. փետրվարի 16-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր



Ա. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

ԽՍՀՄ փլուզումից հետո, ըստ Ս. Հանթինգթոնի, փոխվում է նախկինում երկբևեռ աշխարհի պատկերը, որն այժմ դառնում է բազմաբևեռ. «Ժողովուրդներն ու ազգությունները փորձում են պատասխանել այն պարզագույն հարցին, որին կարող է բախվել մարդը՝ «Ո՞վ ենք մենք»: Եվ նրանք պատասխանում են ավանդական կերպով՝ դիմելով իրենց համար առավել կարևոր հասկացություններին: Մարդիկ բնորոշում են իրենց՝ կիրառելով այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են ծագումը, կրոնը, լեզուն, պատմությունը, արժեքները, սովորույթներն ու հասարակական ինստիտուտները»¹: Եվ ամենամեծ մշակութային խմբերը, որոնց հետ նրանք իրենց նույնացնում են, ըստ Ս. Հանթինգթոնի, քաղաքակրթություններն են. «Ողջ պատմության ընթացքում քաղաքակրթությունները մարդկանց տրամադրել են ինքնանույնացման բարձրագույն աստիճան»²:

90-ականների հայկական փորձառությունը՝ հայկական ինքնությունը վերագտնելու ձգտումներով, ներքաղաքական ու արտաքին քաղաքական թնջուկներով, ներդասելի է քաղաքագետի նշած համաշխարհային զարգացումներում: Քաղաքական ուղեգծեր հստակեցնելիս նորանկախ պետության հիմնավորումները հաճախ ոչ միայն քաղաքական-տնտեսական են, այլև մշակութային շերտեր են շոշափում: «Պատմական հիշողության և, համապատասխանաբար, մշակույթի ժառանգորդման անընդհատականության և դիախորոնիկ միասնության, դիախորոնիկ ամբողջականության»³ որոնումը խիստ որոշակի է ինքնության հարցը քննարկող մամուլի հրապարակումներում: Որպես սեփական պատմության ու ինքնության կորսված հատվածներ՝ մամուլը վկայակոչում է պատմական ժամանակի տարբեր փուլերում խաղացած կարևոր դերերը և քաղաքակրթական առնչությունները: Որպես անցյալի և ինքնության բնութագիր՝ հիշատակվում են հատկապես Եվրոպական քաղաքակրթության հետ ունեցած առնչությունները, ավելին՝ Հայկական քաղաքակրթությունը մեկնաբանվում է իբրև Եվրոպականի մաս:

Ըստ այսմ Եվրոպական կողմնորոշման ընթացքը կարելի է տեսնել ոչ միայն Հայաստան-Եվրամիություն առնչությունների մասին պատմող ձեռնարկներում, այլև այդ տարիների մամուլում: ՀՀ և Եվրամիության միջև Գործընկերության և համագործակցության պայմանագիրը ստորագրվել է 1999 թ., սակայն մինչ այդ էլ Եվրոպան և Եվրոպական պետությունները շարունակաբար վկայակոչվել են իբրև պետություն կառուցելու մոդել՝ առավելապես քաղաքակրթական ընդհանրությունների շեշտադրմամբ: Նորանկախ հանրապետության առաջին դիվանագիտական քայլերից մեկը եղել է 1991 թ. հոկտեմբերի 9-ին Եվրոպական խորհրդին անդամակցելու դիմումը, որ ՀՀ առաջին արտգործնախարար Բ. Հովհաննիսյանը հիմնավորել է իբրև տուն վերադառնալու հնարավորություն⁴: Մամուլը ժամանակաշրջանի մասին կարևոր վկայություններ է պարունակում՝ արձանագրելով այն, ինչ օրախնդիր էր, և այն, ինչ կարող ենք տեսնել այսօր իբրև ետընթերցում:

Ըստ այսմ՝ սույն ատենախոսությունն անդրադառնում է 90-ականների առաջին կեսին նորանկախ պետության մամուլում Եվրոպական քաղաքակրթության հետ հայկական քաղաքակրթությունն առնչելու փորձերին:

¹ С. Хантингтон, Столкновение цивилизаций, Изд. АСТ, М., 2003, с. 17.

² С. Хантингтон, указ. соч., с. 46.

³ Դ. Ա. Չևրգյան, Փիլիսոփայություն. պատմություն. մշակույթ, Ե., ՀՀ ԳԱԱ հրատ., 2005, էջ 71:

⁴ Տե՛ս Բաֆֆի Հովհաննիսյանի ելույթը Եվրոպական խորհրդի Ստամբուլի հանդիպման ընթացքում. 10 սպտեմբերի, 1992թ., «Ազգ», 20 հոկտեմբերի, 1992:

Թեմայի արդիականությունը և գործնական նշանակությունը

Միշտ արդիական և հետաքրքիր է Հայաստանի եվրոպական կողմնորոշման ուսումնասիրությունը՝ և՛ որպես եվրոպական մշտաներկա թեմաների (ժողովրդավարություն, ազատական տնտեսություն, մարդու իրավունքներ, բարձր տեխնոլոգիաներ և այլ), և՛ որպես ազգային ինքնության խնդրի քննություն: Կարելի է հետևել՝ ինչպես է թեման ծավալվում լրատվամիջոցներում, ինչպես է ազդում հասարակական կարծիքի վրա, ինչպես է փոփոխվում ժամանակի ընթացքում: Այս առումով հետաքրքիր է ուսումնասիրել այն ժամանակաշրջանը, երբ աշխարհաքաղաքական կողմնորոշումների խնդիրն ամենից սուր էր դրված՝ անկախության առաջին տարիները: Նման անդրադարձը թույլ է տալիս հետևել՝ ինչպես է ձևավորվել ու ինչ ճանապարհ է անցել թեման, խնդիրները քննարկելու և լուծումներ առաջարկելու ինչպիսի ներուճակություն է ունեցել նորանկախ պետությունը: Լրատվամիջոցների տեսակետից հետաքրքիր է ուսումնասիրել՝ ինստիտուցիոնալ ինչպիսի գարգացումներ է արձանագրել մամուլը:

Ատենախոսությունը ներկայացնում է քաղաքակրթական ժամանակի, ժուռնալիստական ժամանակի և դիսկուրսի ուշագրավ առնչություններ, որոնց գիտակցված կիրառումը լրագրության մեջ թույլ կտա հավելյալ տեսական գործիքներ ունենալ մասնագիտական խնդիրները լուծելիս: Այստեղից էլ՝ ատենախոսության առաջադրած գաղափարների **գործնական կիրառության հնարավորությունը**:

Ուսումնասիրության օբյեկտը, առարկան, նպատակը և խնդիրները

Սեր հետազոտության **օբյեկտը** 1900-ականների առաջին կեսի մամուլում եվրոպա-Հայաստան քաղաքակրթական առնչությունների լուսաբանումն է, **առարկան**՝ այդ տարիների մամուլի այն հրապարակումները, որոնք այս կամ այն կերպ խնդրարկում են հայկական ինքնությունը, եվրոպայի ու եվրոպականի հետ առնչությունները:

Այս հարցադրումներին հետամուտ՝ ատենախոսության **նպատակն** է.

- Եվրոպա-Հայաստան քաղաքակրթական առնչությունների ներկայացման օրինակով ցույց տալ՝ ինչ փոփոխությունների էր ենթարկվում մամուլը ետհամայնավարական իրականության առաջին տարիներին, ինչ գործառույթներ էր ստանձնել, ինչպես էր հարաբերվում երկրի որդեգրած նոր՝ եվրոպական արժեքանության սկզբունքներին, միով բանիվ՝ մասնավոր թեմայի շրջանակներում ցույց տալ հասարակական կյանքի ու մամուլի գարգացումների փոխադանամավորվածությունը:

- Մամուլի վերլուծության միջոցով պարզել՝ ինչպես էր ձևավորվում և արտահայտվում Հայաստանի եվրոպական կողմնորոշումը:

Ըստ այսմ՝ ատենախոսության հիմնական **խնդիրներն** են.

- պարզել՝ ինչ դեր է ունեցել քաղաքակրթական ետնախորքը եվրոպայի թեման լուսաբանելիս,

- պարզել՝ ինչպես է մշակվել եվրոպական կողմնորոշման լեզուն ու մտածողությունը 1990-ականների առաջին կեսի մամուլում,

- պարզել՝ ինչ մակարդակում է ձևավորվել այդ պատասխանը. մնացել է տարերային-չկազմակերպված, վերածել՝ էլ ինտելեկտուալ փորձի, ստացել է կոնկրետ շարադրանքի ձև, դարձել է մամուլի քաղաքականություն և այլն:

Թեմայի մշակվածությունը և աշխատանքի գիտական նորույթը

Սեր գիտաթեմայի վերաբերյալ ուսումնասիրությունները կարելի է բաժանել երկու խմբի՝ եվրոպական քաղաքակրթությանը վերաբերող գրականություն և հայկական քաղաքակրթությանը վերաբերող գրականություն: Առաջին խմբի գրականությունն ավելի

մեծաքանակ է: Առանձնացրել ենք Ս. Հանթինգթոնի, Ֆ. Բրոդելի, Ա. Թոյնբի, Օ. Շպեյնգ-
լերի, Կ. Յասպերսի, Պ. Սորոկինի, Ռ. Օսբոռնի, Յ. Հաբերմասի տեսությունները:

Ժամանակի քաղաքակրթական չափումը և մասնավորապես հայկական քաղաքա-
կրթությունն ուսումնասիրող հայկական տեսական գրականությունն ավելի փոքրաթիվ է:
Պետք է առանձնացնել հատկապես Ա. Ստեփանյանի, Հ. Բայադյանի, Հ. Գևորգյանի, Է.
Հարությունյանի, Ս. Հովհաննիսյանի ուսումնասիրությունները և «Հայաստանը Եվրոպա-
յի ճանապարհին» գիտական հոդվածների ժողովածուն⁵:

Աշխատանքի գլխավոր **գիտական նորությունը** քաղաքակրթական և ժուռնալիստա-
կան ժամանակաշափերի քննությունն է հայկական մամուլի օրինակով՝ մասնավոր թե-
մայի շրջանակներում, ինչպես նաև եվրոպական կողմնորոշման խնդիրը մամուլի դիս-
կուրսի միջոցով վերլուծելու փորձը, որը թույլ է տալիս բացահայտել այդ կողմնորոշման
խորքային շերտերը, որոնք այլ կերպ տեսանելի չեն: Հայաստանի եվրոպական կողմն-
որոշման, եվրոպական կառույցների, նրանց քաղաքականության, Հայաստանի հետ հա-
րաբերությունների մասին բազմիցս գրվել է, սակայն մեր աշխատանքում առաջադրված
խնդիրը նոր է և՛ նպատակով, և՛ այն լուծելու մեթոդաբանությամբ: Հայկական միջավայ-
րում մտահղացումը նոր է նաև մեդիայի տեսության դիտանկյունից՝ քննել ժուռնալիստա-
կան ժամանակի և քաղաքակրթական ժամանակի առնչությունները մասնավոր թեմայի
շրջանակներում՝ թեմատիկայի և լուսաբանման դիսկուրսի քննության ճանապարհով:

Հետազոտության տեսական-մեթոդաբանական հիմքը

Մամուլի տեքստերի ընտրանքը կազմելիս ցանկացել ենք հնարավորինս տարատե-
սակ և փոփոխվող դիսկուրս-պրակտիկաներ ընդգրկել: Ըստ այսմ՝ թեմատիկ բազմազա-
նությունից զատ՝ ուսումնասիրել ենք նաև մամուլի առանձին իրապարակումների դիս-
կուրսը՝ որպես «սոցիալական գործողության կարևոր ձև»⁶ Հայաստանի եվրոպական
կողմնորոշման տեսակետից: Փորձել ենք վերլուծել եվրոպական թեմատիկայի դիս-
կուրսի կարգերը⁷ մամուլում՝ ցույց տալով եվրոպական քաղաքակրթության դիսկուրսի
«տարատեսակությունները սոցիալական համատեքստերի միջով»⁸: Ուստի դիմել ենք
դիսկուրս վերլուծության մեթոդին՝ կիրառելով տարբեր քննադատական և հոգեբանա-
կան դիսկուրս վերլուծության մեթոդներից: Կիրառվել են նաև լրագրության ուսումնասի-
րության արդի այլ մեթոդներ և սկզբունքներ՝ մասնավորապես բովանդակային քննու-
թյան, համեմատական, պատմաքննական, համադրական, վերլուծական հոգեբանության
և այլն:

Ուսումնասիրության փորձաքննությունը

Ատենախոսությունը քննարկվել է պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ ժուռ-
նալիստիկայի ֆակուլտետի մամուլի պատմության և տեսության ամբիոնում: Աշխատան-
քի որոշ հատվածներ առանձին հոդվածներով տպագրվել են գիտական ժողովածուներում:

Կառուցվածքը և բովանդակությունը

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթա-
գլուխներով, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Ներա-

⁵ Հայաստանը Եվրոպայի ճանապարհին, «Ինքնություն» 2, Ե., 2005:

⁶ Л. Филипп, М. В. Йоргенс, Дискурс анализ: теория и метод, Харьков, Гум. центр, 2008, с. 215.

⁷ Դիսկուրսների խումբ, որոնք գործում են միևնույն սոցիալական տարածության մեջ՝ կա՛մ կոնֆլիկտի մեջ, կա՛մ համաձայնեցված:

⁸ Л. Филипп, М. В. Йоргенс, указ.соч., с. 203.

ծության մեջ հիմնավորվում են թեմայի գիտական ուսումնասիրության անհրաժեշտությունը, արդիականությունը, պարզաբանվում են հետազոտության նպատակը, խնդիրները: Ներկայացվում են աշխատանքի մեթոդաբանական հիմքերը, սկզբունքները, որոնք հնարավորություն են տվել նյութը մատուցել համակարգված մոտեցմամբ:

Գլուխ առաջին **Քաղաքակրթական չափումներ և մամուլ**

Այս գլուխը բաղկացած է երկու ենթագլխից: Փորձել ենք հասկանալ ժուռնալիստական և քաղաքակրթական ժամանակաչափերի առնչելիության սահմանները: Մասնավորապես հայ մամուլում քաղաքակրթական հեռանկարների քննությունը ցույց է տալիս հայ մամուլն այդ տեսակետից ուսումնասիրելու հնարավորությունը: Ներկայացրել ենք նաև եվրոպական քաղաքակրթության հիմնական բաղադրիչները՝ ըստ եվրոպացի տեսաբանների: Նման ծանոթությունը գիտական պատկերացում է տալիս այդ քաղաքակրթության մասին, ուստի նաև՝ դրանք լրագրային տեքստերում առավել հանգամանորեն դիտարկելու հնարավորություն:

«Ժուռնալիստական ժամանակ և քաղաքակրթական ժամանակ» ենթագլխում անդրադարձել ենք երկար՝ քաղաքակրթական և կարճ՝ ժուռնալիստական ժամանակաչափերի առնչություններին ու տարբերություններին: Լրատվամիջոցները՝ իբրև կրիչ, պահպանում են սոցիալական ընթացքները՝ որպես գրություն: Այս իմաստով նրանց ստեղծած տեքստերը զուգահեռելի են պատմագրության ստեղծած տեքստերի հետ: Ավելի ստույգ՝ դրանք զուգահեռելի են, ֆրանսիական աննալների դպրոցի պատմագետ Ֆ. Բրոդելի եզրաբանմամբ, **կարճ տևողության** կամ **իրադարձային պատմության** հետ: Ըստ Ֆ. Բրոդելի պատմագիտական տեսության՝ պատմական ժամանակը երեք հիմնական չափում ունի՝ **կարճ տևողություն**՝ լծորդելի քաղաքական պատմության հետ, **միջին տևողություն** կամ տնտեսական և **երկար տևողություն** կամ քաղաքակրթական⁹: Ֆ. Բրոդելի ձևակերպմամբ՝ կարճ տևողության ժամանակաչափը համադրելի է «ժամանակագրի, ժուռնալիստի ժամանակաչափին» և «առավել կամակոր, առավել խաբուսիկն է տևողություններից»¹⁰: Մեդիայի միջոցով, ըստ Ն. Լուհմանի, հասարակական կյանքի առանձին ոլորտները, հիմնվելով ներկա իրավիճակի վրա, կապ են հաստատում իրենց անցյալի ու ապագայի հետ¹¹:

Կարելի¹² է ասել, որ որպեսզի քաղաքակրթական ժամանակը ներբերվի ժուռնալիստիկա, պետք է ձևակերպվի ժուռնալիստական ժամանակի համանմանությամբ, եթե դիմենք ժուռնալիստիկայի մի բնութագրման, որպես «սոցիալապես կոնկրետ»¹²: «իր դրսևորման ձևերի ողջ հարստությամբ»¹³: Չէ՞ որ եթե ընդհանրական-ծավալուն է քաղաքակրթական ժամանակը, ապա մասնավոր-կոնկրետ են այն կազմող սոցիալական ընթացքները: Մեր համատեքստ փոխառելով է. Աթայանի ձևակերպումը հասարակական խոսքի ու գործի մասին՝ կարելի է ասել, որ մեդիան ամեն անգամ փոքր-ինչ ավելի շոշափելի է դարձնում պատմական հեռանկարները: Այսու՝ հարցը հանգում է քաղաքակրթական կերպի բաղադրիչների՝ քաղաքակրթական «դետալների» առանձնացմանը՝ իբրև ներկայական տեքստի միավորներ: Օրինակ՝ մեր գիտաթեմայի հարցը կարող է հնչել այսպես. ինչի՞ց է բաղկացած եվրոպական քաղաքակրթությունը: Ավելին՝ սոցիալապես կոնկրետ լինելու կարող է հավակնել ոչ թե քաղաքակրթական ժամանակը, այլ դրա

⁹ Տե՛ս Ս. Չովհաննիսյան, *Ֆերնան Բրոդելի պատմության տեսությունը*, էջ 102-103:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Н. Луман, *Реальность массмедиа*, Москва, Практис, с. 154.

¹² [Социология журналистики, раздел I. URL://http://evartist.narod.ru/text9/51.htm](http://evartist.narod.ru/text9/51.htm) (23.04.2012).

¹³ Там же.

իմաստավորումը: Ինչպես նկատում է Մ. Բախտինը, «ցանկացած երևույթ մենք ինչ-որ կերպ **իմաստավորում ենք** (ընդգծումը՝ Մ. Բախտինի), այսինքն՝ ներառում ենք ոչ միայն ժամանակային-տարածական գոյության ոլորտում, այլև իմաստային: Այդ իմաստավորումը նաև գնահատման տարր է պարունակում»¹⁴: Ժուռնալիստիկան, բացի պարզ պատճենահանումից, նաև որոշակի մեկնողական ընթացք է՝ ժամանակը հասկանալու և ներկայացնելու խնդրով: Իսկ քաղաքակրթական տեքստը բաղկացած է եղելություններից և դրանց իմաստներից: Իբրև մեկնաբանություն՝ ժուռնալիստիկան կայանում է այն ժամանակ, երբ *մտածում է* իմաստների մասին: Ուստի հարաբերել քաղաքակրթական և ժուռնալիստական ժամանակները թերևս կարելի է այս չափանիշի հաշվառմամբ՝ իմաստավորման ամկայությունը կամ բացակայությունը: Թերևս հնարավոր է քաղաքակրթական ընթացքի *հետևողականության* ընթերցումը ժուռնալիստական դետալների *փոխկրահելիությանը*՝ որպես մտավոր ջանք: Մասնավորապես՝ ակնհայտ քաղաքակրթական իմաստի շեշտադրումներ չպարունակող տեքստերի ընդհանրացում-վերլուծությունը՝ իբրև քաղաքակրթական տեքստ:

Երկրորդ՝ «Քաղաքակրթական հեռանկարը 90-ականների առաջին կեսի հայաստանյան մամուլում: Մամուլը՝ տեսության հարթակ» ենթագլխում փորձել ենք ցույց տալ նշված երկու ժամանակաշափերն առնչելու հնարավորությունը մասնավոր օրինակի հիման վրա. ընթերցել ենք 1990-ականների առաջին կեսի մամուլն իբրև տեսությունների հարթակ: Խոսելով մշակութային փոփոխությունների մասին, որոնք տեղի են ունենում ճգնաժամերի ընթացքում, Պ. Սորոկինը ճգնաժամը հաղթահարելու ներուժակությունը քննարկում է իբրև տվյալ հասարակության **հայեցողական հնարավորություն**: Ըստ այդմ՝ բոլոր մեծ մշակույթները, որոնք պահպանել են իրենց ստեղծագործական ներուժը, հենց ճգնաժամերի ընթացքում են կարողացել հայեցողական նոր կերպեր ու արժեքներ բացահայտել իրենց համար: Եվ ընդհակառակն, այն մշակույթները, որոնք չեն կերպակոխվել և չեն կարողացել նոր ուղիներ գտնել, դարձել են պասիվ և անարգասաբեր»¹⁵:

Այս տրամաբանությամբ, կարծում ենք, անցումային ժամանակաշրջանները հետազոտելիս կարևոր է դառնում հենց հայեցողական միտումների ուսումնասիրությունը: Մեր պարագային խնդիրը մամուլում այդ միտումներն ուսումնասիրելն է: Մամուլում հայեցողական տեքստերը որոշակիորեն կարելի է ընթերցել նաև իբրև քաղաքակրթական հեռանկարների ներքերման բնագավառ, ուստի՝ քաղաքակրթական և ժուռնալիստական ժամանակների առնչության հարթակ:

Մեր ուսումնասիրած ժամանակաշրջանի մամուլը մի ծավալուն մասով ընթերցելի է որպես գաղափարական ներկայի գաղափարական ժամանակագրություն, երբ մեծածավալ տեսական հրապարակումներ էին գետեղում երկրում լույս տեսնող բոլոր պարբերականները: Կարելի է եզրակացնել, որ դրանք հասարակության ներսում տեղի ունեցող արմատական տեղաշարժերի, տարբեր հարացույցերի փոփոխության մասին են վկայում: Տեսական վերլուծությունների թեմատիկ բազմազանությունը քաղաքակրթական ծավալի փոփոխություններ է հուշում:

Ուշագրավ է, որ մամուլի տեսականացումն արժանանում է նաև մամուլի գործիչների ուշադրությանը՝ ինքնավերլուծության համատեքստում: Այսպես՝ «Շրջան» թերթի հետ զրույցում Ս. Պասկևիչյանը նշված միտումները ձևակերպում է որպես քննադատություն. «Այսօր Հայաստանի մամուլն ավելի շատ դատողական է, քան թե հետազոտող: [...] Այսօրվա մամուլում մի բան էլ ինձ դուր չի գալիս՝ քաղաքական նյութերն առավել տեսական են և պակաս հրապարակախոսական»¹⁶:

¹⁴ *Литературно-критические статьи/Сост. С. Бочаров и В. Кожин, М., Художественная литература, 1986, с. 290.*

¹⁵ *Տե՛ս Ս. Сорокин, Человек цивилизация общество, М., Изд. пол. лит., 1992, с. 433.*

¹⁶ *Մ. Դանիելյան, Եթե թերթ հրատարակելու լինեն, լրագրող գործընկերներից ոչ մեկին չեն հրավիրի աշխատանքի, «Շրջան», 21 ապրիլի, 1995:*

Այսպիսով՝ 1990-ականների առաջին կեսի մամուլը, լրագրային չափման մեջ դնելով գիտական նշանակության քննարկումներ, հաճախ տեսությունների հարթակի է վերածվում: Դա կատարվում է մի կողմից՝ գիտական պատշաճ հարթակների բացակայության, մյուս կողմից՝ քննարկվող թեմաների օրախնդիր լինելու պատճառով: Գիտական նշանակության խնդիրները, զետեղվելով ժուռնալիստական ժամանակի՝ մամուլի մեջ, հրատապության և համընդհանուր կարևորության երանգ են ստանում:

«Եվրոպական քաղաքակրթություն» ենթազխում ներկայացրել ենք այդ քաղաքակրթության առանցքային հատկանիշները՝ առավելապես ըստ եվրոպացի տեսաբանների: Առաջին հարցը, որին հարկ է ուշադրություն դարձնել, եզրույթի հստակեցումն է: Արևմտյա՞ն, թե՞ Եվրոպական քաղաքակրթություն: Ըստ Ս. Հանթինգթոնի՝ պատմականորեն Արևմտյան քաղաքակրթությունը Եվրոպական քաղաքակրթությունն է, որ ներկայումս դարձել է եվրոամերիկյան: Քաղաքագետը լուրջ անհամապատասխանություն է տեսնում «Արևմուտք» եզրի մեջ, որը «պոկում է այդ քաղաքակրթությունն իր պատմական, աշխարհագրական և մշակութային համատեքստից»¹⁷: Իսկ Ֆ. Ֆուկույաման խոսում է «պայմանական Արևմուտքի» մասին: Եվրոպան Արևմտյան քաղաքակրթության հայրենիք է անվանում Ա. Թոյնբին: Ըստ նրա՝ Եվրոպայի սոցիալական կյանքի երկու հիմնական տարերքները արդյունաբերականությունը և ժողովրդավարությունն են: Այդ երկու տարերքները պատմաբանը բնութագրում է իբրև «Եվրոպական ֆերմենտ», որ հետզհետե ավելի ու ավելի խորը և արագ է թափանցում աշխարհի բոլոր անկյունները¹⁸:

Օ. Շպենգլերը քննում է եվրոպական ոգին և բնորոշում այն իբրև ֆաուստյան. «Ֆաուստյան մարդու դիտանկյունից նրա աշխարհում ողջ շարժունությունը որևէ նպատակի է միտված: Նա ինքն ապրում է այդ պայմաններում: Նրա համար ապրել նշանակում է պայքարել, հաղթահարել, ինքնաիրացվել», ուստի արևմտյան աշխարհը տեսաբանն անվանում է «լարման տարածություն»¹⁹:

Եվրոպան իբրև առանձին քաղաքակրթություն է ներկայացնում նաև ֆրանսիացի խոշոր պատմաբան Ֆ. Բրոդելը: Նրա «Քաղաքակրթությունների քերականությունն» առանձնացնում է «Եվրոպայի բաղադրիչները»՝

- փայլուն բաղադրիչներ. արվեստ և բանականություն
- հուսալի բաղադրիչներ. տնտեսություն
- խնդրահարույց բաղադրիչներ. քաղաքականություն²⁰:

Տեսաբանը վերացական մի փորձ է առաջարկում, որը պատկերավոր կերպով ցույց է տալիս՝ Եվրոպայում «որն է եղել ժամանակի և տարածության մեջ առավել հաճախ հանդիպող պատմական զարգացման *խնդիրը*»²¹: Ըստ այդ փորձի՝ եթե համակարգիչներն ունեինք 5-րդ դարից մինչև մեր օրերը Եվրոպայի պատմության վերաբերյալ գիտելիքների ողջ համալիրը և համակարգչին տայինք այդ հարցը, ապա կարելի է պնդել, որ պատասխանը կլիներ ազատության, իսկ ավելի ստույգ՝ Եվրոպական ազատությունների խնդիրը: Այդ ազատությունների հակասությունները և հերթագայությունը Ֆ. Բրոդելը համարում է Եվրոպայի առաջընթացի գաղտնիքներից մեկը²²:

Ֆ. Բրոդելի այս միտքը կարելի է զուգահեռել Յ. Հաբերմասի այն մտքի հետ, ըստ որի՝ Եվրոպականը մշակույթ է, որ «բազմաթիվ հարյուրամյակներ ավելի, քան մյուս բոլոր մշակույթները, լինելով պառակտված գյուղի և քաղաքի, եկեղեցական և աշխարհիկ իշխանությունների կոնֆլիկտներից, հավատի ու գիտելիքի մրցակցությունից, քաղաքական իշխանությունների և հակամարտող դասակարգերի պայքարից, տառապանք-

¹⁷ С. Хантингтон, указ. соч., с. 58-59.

¹⁸ Ст'ю А. Дж. Тойнби, *Цивилизация перед судом истории*, М., Айрис-пресс, 2003, с. 329-331.

¹⁹ О. Шпенглер, *Закат Европы: В 2 т. -Т. 1, М., Айрис-пресс, 2003, с. 398-399.*

²⁰ Ст'ю Ф. Бродель, указ. соч., с. 386-400.

²¹ Ф. Бродель, указ. соч., с. 312.

²² Ст'ю Ф. Бродель, указ. соч., с. 312.

Ների մեջ ըմբռնում էր՝ ինչպես միավորել տարբերը, ինստիտուցիոնալացնել հակասությունները, կայունացնել հակասությունները: Իսկ հակասությունների ընդունումը ուրիշի և նրա այլության փոխադարձ ճանաչումը, կարող է դառնալ ընդհանուր ինքնության տարբերակիչ գիծը»²³: Յ. Հաբերմասը շեշտադրում է քաղաքական ինքնության կարևորությունը, առանց որի, ըստ նրա, Եվրոպան չի կարող գործունակ դառնալ:

Գլուխ երկրորդ Քաղաքակրթական երկընտրանքներ

Աշխատանքի այս գլուխը բաղկացած է չորս ենթագլխից: Գլխի թեմատիկ բաղադրիչների քանակը վկայում է քաղաքակրթական երկընտրանքների և դրանց մեկնաբանման մեթոդների ու եղանակների առատության մասին: Հակասություններ նկատելի են ոչ միայն կողմնորոշումների, այլև դրանց կառուցման ու արտահայտման դիսկուրսի տեսակետից: Արդյունքում ստեղծվում է հակասությունների թնջուկ, որոնք ավելի են բարդացնում երկընտրանքները: Մամուլը ներկայանում է որպես բանավեճի տարածություն՝ արտացոլելով հասարակական-քաղաքական տարբեր շրջանակներում տիրող տրամադրությունները: Քաղաքակրթական ժամանակը մամուլում ներկա է առավելապես այնքանով, որքանով դրա մասին մտածում են հողվածագիրները: Բուն լրագրային համակարգումը դրսևորվում է տարբեր թերթերի դավանած քաղաքական ուղեգծերի ընդհանուր շրջանակով՝ բաշխելով իշխանամետ և ընդդիմադիր կողմերի հայեցակետերը:

«Հայաստան և աշխարհաքաղաքական մախապատվություններ» ենթագլխում անդրադարձել ենք նորանկախ պետության աշխարհաքաղաքական կողմնորոշումների խնդրին: Խնդրի քննարկման համար առավել հատկանշական ու պատկերավոր բնորոշում կարող է ծառայել «Ազատամարտի» համարներից մեկի առաջին էջում զետեղված նկարը՝ կատու, որի երկու պոչերի տարբեր ուղղություններով տարածումները երկու լաբիրինթոսներ են ստեղծում²⁴:

Առհասարակ հայության քաղաքակրթական կերպի մասին խորհրդածությունների կարևոր շեշտադրումներից է սփռվածության հատկանիշը: Նշված պատկերացումն այս կամ այն ձևակերպմամբ հանդիպում է նաև մամուլում՝ առավելապես իբրև որևէ քաղաքական գործչի, քաղաքագետ-վերլուծաբանի դիրքորոշում: Պարադոքսալ է, որ մի կողմից՝ սփռվածությունը դիտվում է իբրև ազգային հարստություն՝ կառուցակազմիկ ներուժով, մյուս կողմից՝ այդ սփռված հայությունը միայն վերացականորեն է գիտակցում ինքն իրեն՝ իբրև կերպիսին: Այլ խոսքով՝ ինքն իր բազմազանության տերը չէ:

Մամուլում հաճախ շեշտադրվում է այն հանգամանքը, որ «աշխարհագրական շատ բուռն ու դժվարին հարցերի մեջ հայտնված ՀՀ-ն դեռևս չունի (երևի չի էլ ունենա) սեփական խաղի կոնցեպցիան»²⁵, և որ «մոտակա տասնամյակում Հայաստանը չի կարող դուրս գալ Ռուսաստանի տնտեսաքաղաքական հետաքրքրությունների շրջանակներից»²⁶: Երկընտրանքները քննարկվում են պատմական փորձի ու հնարավոր քաղաքական զարգացումների վերլուծության մեջ: «Ռուսաց ազատարարության որոգայթներում»²⁷, «Խորհրդային կայսրության քայքայման գիմը»²⁸, «XX-րդ դարին արյունոտ վերջաբան է սպասվում»²⁹ և այլն: Վերնագրերն արդեն հուշում են կարծիքների թեր և դեմ կողմերը, որոնք բարդացնում են աշխարհաքաղաքական կողմնորոշման խնդիրը: Հայաստանի

²³ Ю. Хабержмас, *Расколотый Запад, Пер. с нем.-М., Издательство “Весь мир”, 2008, с. 44.*

²⁴ «Կողմնորոշում...», «Ազատամարտ», 7-13 հոկտեմբերի, 1994:

²⁵ Ա. Կարապետյան, Ի՞նչ է կատարվում, «Ուրբաթ», 26 հուլիսի, 1991, թիվ 29 (66):

²⁶ Նույն տեղում:

²⁷ «Մունեստիկ», 18 հուլիսի, 1990:

²⁸ «Մունեստիկ», 8 օգոստոսի, 1990:

²⁹ «Մունեստիկ», 18-24 հոկտեմբերի, 1994:

աշխարհաքաղաքական նախապատվության հարցը հաճախ է քննարկվում որպես Ռուսաստանի և Արևմուտքի մրցակցություն՝ մասնավորապես մեր տարածաշրջանում առավելության հասնելու համար: Ռուսաստան-Արևմուտք ընդհանրական երկրնորանքից զատ մամուլում որոշակիանում է նաև ԱՄՆ-ի՝ միջազգային հարաբերություններում և մասնավորապես մեր տարածաշրջանում ամենաազդեցիկ ուժերից մեկի կերպարը:

Չուտ արժեքային, քաղաքակրթական հատկանիշները հաճախ դադարում են ուշադրության կենտրոնում լինել, երբ խոսքը վերաբերում է երկրի ներպետական խնդիրներին: Այդ հատկանիշները մնան դեպքերում տեղը զիջում են քաղաքական մարտահրավերներին և դրանց լուծման եղանակներին: Աշխարհաքաղաքական ընտրության խնդիրները քննարկվում են որպես միջպետական խնդիրներ՝ կարևորելով պետության քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ շահեր:

«Արդյո՞ք Հայաստանը Եվրոպա է» ենթազուխն անդրադառնում է հարցադրման պատասխանի որոնումներին՝ իբրև հայացք ներսից և հայացք դրսից: Թեման արժարժող ամենաուշագրավ հոդվածներից մեկի արդեն իսկ հարցադրումը՝ իր «ճակատային»-պահանջկոտ բնույթով, ուսումնասիրության նյութ կարող է տալ՝ «Արդյո՞ք Հայաստանը Եվրոպա է»³⁰: Ձևակերպման մեջ կարելի է կարդալ ժամանակային շեշտադրումը՝ որպես ներկայի հրամայական: Հարցադրման հնչերանգը ենթադրում է, որ պատասխանը պետք է կազմակերպվի անմիջապես հարցադրումից հետո, ուստի հավելյալ կարևորություն է հաղորդվում հետագա շարադրանքին: «Ասում են՝ «Ես ինչ-որ մեկին պետք է մի բան ասեմ... հենց հիմա»: Դա մշտական չէ, բնավ համընդհանուր ճշմարտություն չէ [...]: Բայց հենց հիման այն է, ինչ ես ենթադրում եմ, այն է, թե ով եմ ես»³¹, - գրում է սոցիոլոգ Ս. Հոլլը: Այսպիսով՝ նշված հարցադրումը՝ իբրև անմիջապես հաջորդող պատասխանի ակնկալիք, շեշտում է սեփական ինքնության հարցի հրամայականը, և այդ հրամայականը լծորդվում է Եվրոպայի հետ:

Հայկական քաղաքակրթության մասին խորհրդածությունը մամուլում հաճախ ներկայանում է որպես հայացք դրսից: Պարբերականներում զետեղվող հոդվածներն, ընդ որում, հայկականությունը մեկնաբանում են և՛ բացասական, և՛ դրական լուսի տակ: Հաճախ բավական ընդգրկուն այս վերլուծություններում Հայաստանի Եվրոպականության հարցն առանցքայիններից է: Հանգամանք, որ անկախ նրանից՝ հերքվում է այդ կապը, թե ընդունվում, կարծում ենք, վկայում է հայկականի ու Եվրոպականի համեմատության բնականության, ուստիև՝ այդ երկու բևեռների առնվազն **համեմատելիության** մասին:

Բացի այդ՝ օտարազգի գործիչների դիտարկումները ներկայացնող նյութերի առատությունը մամուլում մեկ կալ կարևոր բան է վկայում. հայ մամուլի ինքնաներկայացման ինքնաքննման դիսկուրսը հատկանշվում է որոշակի անիքնաբավությամբ: Ինքնամեկնաբանման այդ պակասությունը, թերևս նաև անվճռականությունը փորձ է արվում լրացնելու օտար հայացքով: Հայկական ինքնաստեղծման դիսկուրսում «մուտքի իրավունքը»³² մեծ չափով վերապահվում է դրսից նետված հայացքին, որով փորձ է արվում ինքնաընդլայնման անաչառության և ընդգրկունության հասնել:

Հաջորդ՝ **«Պառակտված քաղաքակրթություն»** ենթազուխը նվիրված է հայկական քաղաքակրթական կողմնորոշման կարևորագույն խնդիրներից մեկին: Աշխարհաքաղաքական երկրնորանքները մամուլում մեկնաբանվում են քաղաքակրթական որակների և գործնական քաղաքականության խնդիրների հաշվառմամբ՝ նդելով հրապարակախոսական ընդհանրացումների: Հաճախ այդ երկու ոլորտները հակասում են միմյանց և տրամագծորեն հակադիր կարծիքներ ձևավորում: Այդ օրինակների մեծ մասում դժվար չէ ընթերցել մի խնդիր, որ գիտական գրականությունը բնորոշում է իբրև պառակտված քաղաքակրթություն: Այդ խնդիրը մամուլում ներկայանում է մի քանի բևեռներով՝ Արևելք-

³⁰ Տե՛ս Ս. Ոսկայան, *Արդյո՞ք Հայաստանը Եվրոպա է*, «ՀՀ», 16 դեկտեմբերի, 1993:

³¹ Л. Филлипс, М. В. Йоргенсен, указ. соч., с. 190.

³² Տե՛ս Л. Филлипс, М. В. Йоргенс, указ. соч., с. 232.

Արևմուտք, Ռուսաստան-Եվրոպա, Խորհրդային անցյալ-անկախություն, խաչմերուկ-կամուրջ և այլն: Պառակտված քաղաքակրթության խնդիրն, այսպիսով, ներկայանում է որպես տարամետ կողմնորոշումների բարդ հյուսվածք, որը ներառում է սոցիալական, քաղաքական, մշակութային ոլորտներում գոյություն ունեցող տարաբնույթ այլընտրանքները:

«Հայկական հիշողություն, Հայկական հարց, Եվրոպա» ենթագլխում քննարկվում է այն հարցը, թե ինչպես է ազդում Հայկական հարցը աշխարհի և մասնավորապես Եվրոպայի հետ հարաբերությունների վրա:

Մ. Փոլադյանը, կիրառելով Պ. Բուրդյույի տեսության հիմնարար հասկացություններին մեկը՝ հաբիտուսը, փորձում է բնորոշել հայկականություն հասկացությունը որպես «հիշողության տարածք», որ «կազմված է ճանաչողական մոդելներից, ունակություններից»³³: Այս տեսակետից մամուլն ընթերցելը թույլ է տալիս ուսումնասիրել հայկական հիշողության իմաստային ծանրաբեռնվածության կոնկրետ բաղադրիչները: Առանց սխալվելու կարող ենք ասել, որ դրանցից մեկը Հայկական հարցն է: Իր համատեքստային տրամաբանությամբ այն առաջին հերթին վերաբերում է ազգային ինքնության, ապա միայն քաղաքական հարաբերությունների ոլորտին: Հանգամանք, որ էական գործոն է հարցի շրջանառման, զարգացման և լուծման ուղիների տեսակետից: Ուստի մեր թեմայի դիտանկյունից նախ էական է մի հարցադրում. ձևակերպվելով որպես ազգային ինքնության բաղադրիչ՝ ինչպե՞ս է Հայկական հարցն առնչվում Եվրոպական ինտեգրման Հայաստանի ջանքերի հետ: Կա՞ առավել տարածված պատասխան այս հարցին: Պատասխանը որոնելուց առաջ, սակայն, պետք է նշել, որ քննարկելի է ինքնին հարցադրման եղանակը՝ պայմանավորելով հնարավոր պատասխանների բնույթը: Որպես օրինակ՝ անդրադառնանք հարցի մի ուշագրավ ձևակերպման. «Արդյո՞ք հայկական փորձառությունը կներդասվի XX դարի բռնությունների ինչ-որ ընդհանուր պատմության մասին ընդհանուր մի հիշողության մեջ, որտեղ ոչ զոհը, ոչ ոճրագործն անուն չեն ունենա: Թե՞ հայկական փորձառությունը կմնա խայթ Եվրոպայի հիշողական մշակույթի մեջ»³⁴: Հարկ է կարևորել, որ մամուլը հաճախ քննարկում է հարցը հենց նման շեշտադրմամբ՝ ընդգծելով Եվրոպայի արժեքաբանությունը: Ավելի հաճախ, սակայն, այս թեմայով հրապարակումները ցեղասպանության մասին տարբեր վկայություններ են, որոնք որոշակիորեն հիշողության ամրացման գործառույթ են կատարում:

Հայկական պահանջատիրության հարցն օրգանական զարգացմամբ վերաճում է նաև Թուրքիայի հետ հարաբերությունների հաստատման հարցի: Հարևանների հետ բնականոն հարաբերությունների հաստատումը շրջանառվում է մամուլում իբրև անկախ պետության քաղաքական կայունացման ու զարգացման անհրաժեշտ քայլ: Այդ քայլը ներկայանում է նաև իբրև բնական և օրինաչափ միտում Եվրոպական զարգացման ուղին ընտրած երկրի համար. Եվրոպայի քաղաքական փորձառության համար բնական է հարևանների հետ հակասությունների հաղթահարումը: Մամուլում, սակայն, շրջանառվում է նաև Հայաստանի աշխարհաքաղաքական խնդիրների արևելյան բնույթի հարցը:

Գլուխ երրորդ Եվրոպական հեռանկարներ

Եվրոպական դիսկուրսների ներբերումը ետխորհրդային հայկական իրականություն մամուլի միջոցով պայմանականորեն կարելի է բաշխել ըստ ոլորտների՝ քաղաքական, տնտեսական, բարոյական, ինստիտուցիոնալ, մշակութային և այլն: Դա իրականանում է

³³ Մ. Փոլադյան, *Խոսքի վերադարձը (Լեզվաբանություն և ոճագիտություն)*, Երևան, Նաիրի, 1999, էջ 8:

³⁴ Մ. Դաբաղ, *Հայկ. հիշ. Եվր. հիշողական քաղաքականության համատեքստում*, *Հայաստանը Եվր. ձևն.*, «Ինքնություն» 2, Երևան, 2005, էջ 300:

մանավորապես որպես նոր եզրաքանութիւն այդ տարբեր ոլորտներում: Եթե քաղաքական նոր մուտքերը գերազանցապես բնորոշվում են «ժողովրդավարություն» եզրով, տնտեսականը՝ «ազատ շուկա», «սեփականաշնորհում» և այլն, ապա մշակույթի դեպքում դրանք կարելի է անվանել 20-րդ դարի արևմտյան արվեստ և գրականություն: Ընդ որում՝ մուտքերի համդեպ գոլշակվորությունն այստեղ առանձնանում է նաև սեփական հին մշակույթի շեշտադրմամբ: Հաճախ քաղաքակրթական իմաստները որոնվում են բացառապես մշակութային տեսուտերում, իսկ քաղաքական և տնտեսական ուղեգծերը մեկնաբանվում են ըստ պետության շահի սկզբունքի: Եվրոպական ժողովրդավարությունը և ազատ շուկան հաճախ դիմադրության են հանդիպում՝ պետության ինքնիշխանությունը կորցնելու, խորհրդային տարիներին անցած արդիականացման ընթացքն անտեսելու, անհեռատես ծրագրեր կազմելու և այլ մտավախություններով: Մշակույթը, քաղաքականությունն ու տնտեսությունը հաճախ քննարկվում են իբրև միասնական ու շաղկապված ոլորտներ: Երկրի տնտեսության և առհասարակ բոլոր բնագավառների համար քաղաքակրթական որակները սկսում են ընկալվել որպես գործնական կիրառության ռեսուրսներ: Հաճախ է շեշտվում քաղաքական ուղեգծերն այդ որակների լրջագույն ուսումնասիրությանը կազմակերպելու անհրաժեշտությունը:

«Եվրոպան՝ մշակութային հեռանկար» ենթագլխում վերլուծել ենք մամուլում հայկական մշակույթի փաստարկը՝ որպես Հայաստանի եվրոպական կողմնորոշման հիմնավորում: Տարբեր հրապարակումներ շեշտում են Արևելյան և Եվրոպական քաղաքակրթությունների առանձին կողմերը՝ փորձելով մշակույթների տիպաբանական բնութագրերից սահուն կերպով բխեցնել հայկական մշակույթի առնչությունը դրանց հետ: Մշակութային տեսուտը և անդրադարձը մշակութային տեսուտերին մեր գիտաթեմայի համար առանցքային են: Սա այն բնագավառն է, որին ամենից հաճախ է հղում արվում որպես Եվրոպական քաղաքակրթության հետ հայկական քաղաքակրթության սերտ առնչությունների վկայություն: Սա նաև այն բնագավառն է, որին ամենից շատ են դիմում, երբ խոսքն առհասարակ ինքնության մասին է: Ինչպես նշում է Ֆ. Բրոդելը, քաղաքակրթությունը «մշակութային բնութագիրների և ֆենոմենների հավաքածու»³⁵ է: Իսկ ըստ Ս. Հանթինգտոնի՝ քաղաքակրթության մշակութային բնութագրերն ու տարբերություններն առավել կայուն են, քան քաղաքականն ու տնտեսականը³⁶: Եվրոպան մամուլում հաճախ ներբերվում է իբրև մշակութային գաղափարաբանություն և առնչակցվում հայկականի հետ՝ որպես օրինակ և որպես սեփական կորսված ինքնության բնութագիր: Մամուլում տարածված միտում է, երբ շեշտվում են Արևելյան և Եվրոպական քաղաքակրթությունների առանձին կողմերը և փորձ է արվում մշակույթների տիպաբանական բնութագրերից սահուն կերպով բխեցնել հայկական մշակույթի առնչությունը դրանց հետ: Թեմայի ծավալումները բոլոր պարբերականներում առավելապես վերլուծական են, հաճախ գեղարվեստական: Մշակույթի թեման առանձնահատուկ է նաև նրանով, որ անգամ որևէ իրադարձության մասին, օրինակ, հաշվետվության ժանրով գրված նյութը հաճախ էական քաղաքակրթական շեշտադրումներ է պարունակում:

«Եվրոպան՝ քաղաքական հեռանկար» ենթագլխում վերլուծել ենք մամուլի քաղաքակրթական շեշտադրումները Եվրոպա-Հայաստան քաղաքական հարաբերությունները լուսաբանելիս: Այս տարիներին, երբ նորանկախ Հայաստանը դեռ նոր-նոր ճշգրտում էր աշխարհաքաղաքական իր նախապատվությունները, և արտաքին քաղաքականությունը, ընդդիմադիր մամուլի գնահատմամբ, հաճախ իրավիճակային էր և առանց ձևավորված հստակ հիմնադրույթների, մամուլն այդուամենայնիվ ծավալում վերլուծություններ է հրապարակում կարևորագույն միջազգային թեմաներով: Այդ թեմաների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դրանք փոքր բացառությամբ վերաբերում են աշխարհի այն հատվածներին, որոնք թեկուզ ոչ անմիջականորեն, բայց այս կամ այն կերպ առնչ-

³⁵ Ф. Бродель, указ. соч., с. 41-42.

³⁶ С. Хантингтон, указ. соч., с. 113.

վում են Հայաստանի հետ՝ թեկուզև որպես դեռ բավարար կերպով չզօհտակցվող, մշուշոտ հեռանկարներ: Թերևս սխալված չենք լինի՝ ասելով, որ միջազգային հարաբերությունների այն միավորները, որոնց անդրադառնում է մամուլը, և հատկապես նրանք, որոնց ծավալուն վերլուծություններ է նվիրում, թեկուզև անհստակ հեռանկարում այս կամ այն կերպ բնորոշում են հայկական ինքնապատկերացումը՝ իբրև «ինքնատեղադրում»: Անկախության առաջին տարիներին մամուլի միջազգային թեմաների մեծագույն մասը վերաբերում է եվրոպական կառույցներին և դրանց հետ Հայաստանի հարաբերություններին: Ակտիվորեն և հաճախ որոշակի խանդավառությամբ են լուսաբանվում նորանկախ երկրի միջպետական հարաբերությունները: Այս տարիների մամուլին բնորոշ են եվրոպական մամուլից արված թարգմանական արտատպությունները եվրոպական քաղաքական միավորների, կառավարման համակարգերի մասին: Մամուլն արծարծում է ժողովրդավարության բազմակիության հարցը: Կառավարման համակարգի ընտրության հարցերն ավելի են սրվում ու վերածվում բանավեճի՝ Սահմանադրության ընդունման օրերին՝ իբրև հանրաքվեում «Այո» կամ «Ոչ» ասելու հիմնավորում: Նման հրապարակումների քննությունը թույլ է տալիս տեսնել եվրոպա-Հայաստան քաղաքակրթական առնչությունների «գործնական» «կարծ տևողության» պատկերը:

Մի խոսքով՝ ժամանակաշրջանի մամուլի լուսաբանած իրականությունը բնութագրելի է Յ. Հաբերմասի բառերով՝ իբրև սեփական քաղաքական տարածությունը քաղաքական-քաղաքացիական հարաբերությունների եվրոպական ձևերի առջև բացելու փորձ: Մամուլի նման նախաձեռնություններն ուշագրավ են հատկապես նրանով, որ բնորոշում են բուն պարբերականների հանձնառությունը՝ ներբերելու եվրոպական թեմաներ: Յուրաքանչյուր պարբերական ընդգծում է խնդիրների այս կամ այն կողմը, առաջնություն տալիս այս կամ այն հրամայականին, բոլոր դեպքերում, սակայն, նկատելի է նաև մամուլի նախաձեռնությամբ ու միջոցներով եվրոպականի հետ առնչվելու միտումը:

«Եվրոպա» տնտեսական հեռանկար» ենթագլուխն անդրադառնում է եվրոպական տնտեսական արժեքների հետ Հայաստանի տնտեսության հարաբերությունների լուսաբանմանը մամուլում: Հետհամայնավարական տնտեսությունն առաջադրում է զարգացման մարտահրավերներ, որոնք ուղղորդելու և լուծելու ուղիները՝ որպես նորաստեղծ պետության տնտեսական քաղաքականություն, ոչ միանշանակ գնահատականների են արժանանում: Այլընտրանքն ընդհանուր ձևակերպմամբ ազատ շուկայի արևմտյան մոդելն է, որը, սակայն, կոնկրետ կիրառությունների պարագային հակասական մեկնաբանությունների տեղիք է տալիս: Վիճարկելիս այստեղ ոչ թե ազատ շուկայական հարաբերությունների գաղափարն է, այլ դրա կիրառման առանձնահատկություններն ու թերացումները հայկական միջավայրում:

Հայաստան-Եվրոպա քաղաքակրթական առնչություններն այս ոլորտում կարելի է քննել ոչ միայն ըստ որոշակի եվրոպական տնտեսական համակարգերի հետ առնչությունների, Եվրոպա-Հայաստան տնտեսական հարաբերությունների, այլև ըստ բուն հայաստանյան տնտեսության լուսաբանման: Երկրորդ դեպքում բացահայտվում են եվրոպականի հետ ինքնաբարդատման ուշագրավ նրբերանգներ, որոնք առաջին հայացքից կարող են տեսանելի չլինել: Ձուտ տեղական նյութի քննությունը մամուլում պարունակում է մեկնաբանություններ, որոնք բնորոշում են ազատ շուկայական հարաբերությունների ընկալումը հայկական միջավայրում, ըստ այսմ՝ թույլ տալիս կարողալ նաև եվրոպականի հետ առնչությունների ենթատեքստային, ոչ անմիջական ձևեր: Մենք ուշադրության ենք արժանացրել հատկապես այս տիպի հրապարակումները: Հետևաբար՝ եվրոպան իբրև տնտեսական զարգացման հեռանկար, որոնք ենք մամուլի նաև այն հրապարակումներում, որոնք անմիջականորեն չեն վերաբերում եվրոպային: Անմիջապես Եվրոպայի փոխարեն մամուլում փնտրել ենք եվրոպական արժեքը՝ ազատ շուկայավարման սկզբունքը:

Այն օրերին, երբ անկախությունը թեև զրեթե վճռված, բայց այդուամենայնիվ թեա-
կան էր, մամուլն առաջադրում է հանունի և ընդդեմի հարցը: Որպես անկախությանն
«այդ» ասելու հիմնավորում՝ հաճախ հիշատակվում են ժողովրդի բնական որակները,
այլ կերպ՝ մենտալիտետը: Օրինակ՝ «Անկախությունը մեծապես կխթանի ձեռներեցու-
թյունը, որը, կարելի է ասել, հայերիս արյան մեջ է»³⁷, «Վերականգնենք հայ վաճառա-
կանի համբավը»³⁸:

Անկախության շեմին մամուլը հաճախ տպագրում է հարցազրույցներ ազատ մտա-
ծողության տեր անձանց հետ, ովքեր հաջողության են հասել նույնիսկ համայնավարա-
կան կարգերի պայմաններում հենց ազատության շնորհիվ և ազգի զարգացման ապա-
զան համարում են հենց ազատությունը: Ազատականացող շուկայի թեման մամուլում
զուտ տնտեսականից զատ ներառում է նաև սոցիալ-հոգեբանական տեսանկյուններ՝
կապված հետհամայնավարական հասարակության զարգացումների հետ: Դա նոր պայ-
մաններին հարմարվել փորձող հասարակության խնդիրն է:

Մամուլը հաճախ է հրապարակումներ գետեղում հողերի և առհասարակ սեփակա-
նաշնորհման գործընթացի, զարգացած երկրների հետ տնտեսական հարաբերություն-
ներ հաստատելու հեռանկարների մասին: Տնտեսական հարաբերությունների նոր
կերպն ընկալվում է նաև որպես նոր միջանձնային հարաբերությունների ձևավորման
էական գործոն: Տնտեսության զարգացման հեռանկարը դիտվում է մարդկային ռեսուրսի
զարգացման համապատկերում:

Մամուլում արևմտյանի ներմուծման և ազգայինի խելամիտ կիրառման խնդիրը հա-
ճախ ձևակերպվում է իբրև հավասարակշռության պահպանման խնդիր: ԴՅ նախկին
վարչապետ Վ. Մանուկյանն, օրինակ, երկրի տնտեսական իրավիճակը գնահատում է
այսպես. «Տնտեսության ազատականացման այն մոդելը, որ առաջարկում են մեզ Արև-
մուտքի որոշ շրջանակներ, հնարավոր է՝ բարի մտադրություններով, հաշվի չեն առնում
ո՛չ տեխնիկական զարգացած ձեռնարկությունների գոյության փաստը երկրում, ո՛չ
բարձր որակավորում ունեցող հարյուր հազարավոր մասնագետներին, ո՛չ մեր ժողովրդի
մտածելակերպը, ո՛չ էլ նրա բնական հավակնությունները»³⁹: Շուկայական խնդիրները և
քաղաքական խնդիրները հաճախ ներկայացվում են շաղկապված՝ շեշտելով դրանց
փոխպայմանավորվածությունը:

«Եվրոպան՝ բարոյական ազտականացման հեռանկար» ենթազուխն անդրադառ-
նում է քաղաքական համակարգի փոփոխության արդյունքում բարոյականության
խնդիրների նոր արժաթուղիներին մամուլում: Ե՛վ գիտական, և՛ հասարակական, և՛ լրա-
գրային շրջանակներում հայկականության մասին ինքնապատկերացումները հաճախ են
պարունակում դիտարկումներ հայի բարոյական նկարագրի մասին ընտանիքի, հյուրա-
սիրության, բարեկամության կատարելատիպերով: Առաքինի հայի կարծրատիպը, սա-
կայն, նաև քննադատվում է՝ մասնավորապես հայկականի և ուրիշի հակադրության ան-
հիմն լինելու շեշտադրումով: Արժեհամակարգի փոփոխությունն ու կողմնորոշումը դեպի
ազատականացում, իր ճգնաժամային բնույթով, ինքնըստինքյան մղում է վերաքննման և
վերահասակացման: Վիճարկվում են ոչ միայն մշակույթի, սեփական ակունքների մասին
պատկերացումները, այլև կենցաղին վերաբերող բազմաթիվ խնդիրներ: Հասարակական
տրամադրություններն արտացոլվում են մամուլում՝ հաճախ պարունակելով քննադա-
տություն հնի հասցեին: Այդ քննադատությունն ամենից հաճախ հնչում է գենդերային
խնդիրների ոլորտում: Սկստելի է, որ հատկապես 1991թ. մամուլը շատ հաճախ է անդ-
րադառնում մասնավորապես սեռական ազատականացման խնդիրներին: Հասարակու-

³⁷ Հասել է ժամը վճռական, «Ուրբաթ», 20 սեպտեմբերի, 1991:

³⁸ Վերականգնենք հայ վաճառականի համբավը, «ԴԴ», 5 հունվարի, 1991:

³⁹ Վ. Մանուկյան, Հայկական երազանքը գոյատևման փակուղում, «Գոլոս Արմենիի», թիվ 145-147, 1994:

թյան անդամների բարոյական կերպարների ներկայացումը մամուլում ընդլայնվում է մինչև խորհրդային հասարակարգում արգելված թեմաներ: Ազատականացումը, սակայն, հաճախ նաև քննադատվում է մամուլում՝ ազգային արժեքների դիրքերից:

Համաձայն Ֆ. Բրոդելի քաղաքակրթությունների տեսության՝ քաղաքակրթությունները մերժում են ցանկացած մշակութային արժեք, եթե այն սպառնում է նրանց կառուցվածքներից որևէ մեկին: Փոխառումից այդ հրաժարումները, թաքնված թշնամանքները, ըստ տեսաբանի, ուղիղ քաղաքակրթությունների սիրտն են տանում: Ընդ որում՝ հրաժարումն ամեն անգամ տեղի է ունենում երկար տատանումներից և այդ արժեքը սեփական քաղաքակրթությանը հարմարեցնելու, ձուլելու տևական փորձերից հետո⁴⁰: Ուստի հետաքրքիր է ինչ կերպ կզարգանան ներկայացված մտայնությունները հայ հասարակության ներսում: Եվրոպական նշված ազատությունների ներմուծումն այս տարիներին խնդրարկման նախնական փուլում էր՝ հնարավոր ելքերի անորոշությամբ: Դրանց քննարկման դիսկուրսի ամփոփակումությունը տատանումների շարունակություն է հուշում: Այսօր՝ երկու տասնամյակ անց էլ, այդ խնդիրները շարունակվում են արժարժեքներով լրատվամիջոցներում: Ինչպես նշում է Ֆ. Բրոդելը, «Կնոջ դերը միշտ ներկայանում է որպես քաղաքակրթական կառուցվածք, որպես յուրօրինակ թեսթ, քանի որ յուրաքանչյուր քաղաքակրթության մեջ այդ դերը *երկարաժամկետ* իրողություն է, որ *դիմադրում է* արտաքին ազդեցություններին, համեմատաբար կարճատև ժամանակահատվածում փոխվում է *դժվարությամբ*»⁴¹ (ընդգծումները՝ Ֆ. Բ.):

«Եվրոպան և մամուլի ինստիտուցիոնալ զարգացումները» ենթագլուխն անդրադառնում է ինստիտուցիոնալ այն փոփոխություններին, որոնց ենթարկվում է մամուլը պետության անկախացմամբ: Մամուլի հրապարակումների վերլուծությունը թույլ է տալիս որսալ, դիսկուրսի տեսաբան Ֆերկլոյի ձևակերպմամբ, դիսկուրսի *սոցիալական կառուցարարի* դերը դիսկուրսի ձևավորման գործում, օրինակ՝ «ամբողջությամբ մեջ ի՞նչ ինստիտուցիոնալ և տնտեսական պայմանների է ենթարկվում դիսկուրսիվ պրակտիկան»⁴²: Մյուս կողմից՝ հնարավոր է դառնում ուսումնասիրել, թե ինչպես են դիսկուրսները նպաստում այս կամ այն ինստիտուտների կայացմանը: Հետևաբար մամուլն անհրաժեշտ է քննել նշված երկու հակամետ գործընթացների դիտանկյունից միաժամանակ: Քննել եվրոպական չափանիշներով մամուլի ազատականացման ձգտելիս մամուլի ինստիտուտի կատարելագործումը, դրանով՝ երկրի այլ ինստիտուտների համակարգում խաղացած դերի փոփոխությունը: Ըստ այսմ՝ հետազոտել եվրոպական կողմնորոշման դիսկուրսի հարստացման ու զարգացման հնարավորությունները:

Ժամանակաշրջանի մամուլը հատկանշվում է բացախսությամբ և բանավիճայնությամբ: «Անդրադարձն», օրինակ, ստեղծում է «Մերժված հողված» խորագիրը՝ խմբագրության ձևակերպմամբ, լրագրողներին ազատության և բացախսության իրավունքից չզրկելու նպատակադրումով: Խորագրի ներքո, ըստ թերթի մտահղացման, կարող են հանդես գալ լրագրողները և նրանք, ովքեր կմերժվեն որևէ խմբագրության կողմից: Թերթից թերթ մյուսերի նման անցումները հուշում են տարբեր կարծիքների հարթակներ ստեղծող մամուլի զարգացումը: Մամուլում զետեղվում են տարբեր սոցիալական հետազոտությունների արդյունքներ, հարցուպատասխաններ ընթերցողների հետ: Ազատականացման հետևանքով մամուլի ուշադրության կենտրոնում է հայտնվում հասարակական կարծիքը, որն արդեն միակ և համընդհանուր չէ: Քաղաքացու, ընթերցողի միտքը՝ իբրև փոփոխելի, շարժուն կառույց, տեսականորեն կարող է մասնակցել հասարակական զարգացումներին: Մամուլը ներբերում և ցույց է տալիս դրա հնարավորությունը: Սա ինստիտուցիոնալ չափում է, որ կենսագործվում է մամուլում՝ թվարկված և այլ ձեռնարկումների միջոցով: Ժողովրդավարական ազատությունն ու իրավունքն իրացվում են

⁴⁰ *Տե՛ս Փ. Բրոդել, ցուց. սոչ., ս. 58-59.*

⁴¹ *Փ. Բրոդել, ցուց. սոչ., ս. 58.*

⁴² *Մ. Փիլլիպ, Մ. Վ. Իորգենսեն, ցուց. սոչ., ս. 152.*

լրագրի մակարդակում՝ դառնալով հասարակության ներկայության հարթակ, որ շարունակական գարգացման հեռանկարում կարող է վերաճել մասնակցության հարթակի:

Մամուլը նաև քննադատում է մամուլի՝ ժողովրդավարական համակարգի կարևորագույն ինստիտուտներից մեկի կայացման թերությունները: Այսպես՝ «Մունեսիկի» թղթակցին անհանգստացնում է այն համագամանքը, որ մամուլը հասարակական կարծիքի առաջամարտիկ ու ձևավորող չէ, ինչպես Արևմուտքում, այլ լավագույն դեպքում միայն վերլուծում է «պոստֆակտում»⁴³:

Ընդհանրացնելով կարելի է ասել, անկախության առաջին տարիների մամուլը հատկանշվում է նաև հասարակական կարևոր ինստիտուտի վերածվելու գիտակցվող անհրաժեշտությամբ և դրան ուղղված որոշ նախաձեռնություններով:

Եզրակացություններ

1. 90-ականների առաջին կեսի հայաստանյան մամուլը մի ծավալուն մատվ ընթերցելի է որպես գաղափարական ներկայի **գաղափարական ժամանակագրություն**, երբ մեծածավալ տեսական հրապարակումներ էին զետեղում երկրում լույս տեսնող բոլոր պարբերականները: Կարելի է եզրակացնել, որ դրանք հասարակության ներսում տեղի ունեցող արմատական տեղաշարժերի, տարբեր հարացույցերի փոփոխության մասին են վկայում: Լրագրային տեքստերն աստիճանաբար ձեռք են բերում **միջդիսկուրսայնության** որակ, ինչը խոսում է հասարակական տեղաշարժերի հնարավորության մասին:

2. «Արևմուտքը» որպես աշխարհագրական-մշակութային ամբողջություն, հատկապես անկախության առաջին տարվա մամուլում հաճախ չի որոշարկվում: Ընկալվում է հիմնականում որպես Եվրոպան ու Ամերիկան միաժամանակ: Այս անհստակությունը կարելի է որպես ինքնապատկերացման և ապագայի ծրագրերի որոշակի անհստակություն ընթերցել: Եվրոպայի ու Ամերիկայի համաժամանակյա-չտարորշված ներկայությունը «Արևմուտք» եզրում, սակայն, բխում է նաև այն արժեքներից, որոնք ընդհանրական և հիմնականում են այդ գոտիների համար: Դրանք են **ժողովրդավարությունը, մարդու իրավունքներն ու ազատ շուկան**: Ըստ այսմ՝ նման հրապարակումներում Արևմուտքի չքաղադրված ներկայությունը հուշում է հայկական ընկալման մեջ այդ երեքի առաջնայնությունը:

3. Ցանկացած հեռանկար, այդ թվում Եվրոպականը, ծավալվում է սեփական աշխարհաբաղաբական դրության մասին բանավեճերի համապատկերում, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն դառնում են նաև այդ հեռանկարը բնութագրող գործոններ: 90-ականների առաջին կեսի հայաստանյան մամուլի դիսկուրսը **բանավիճային** է բնույթով արևմտյան, անգամ եթե դնում է Արևմուտք - Արևելք երկընտրանքը:

4. Մամուլի հրապարակումներում Եվրոպական մշակույթի հետ առնչակցությունը բարձրացվում է մինչև **մասնակցություն** դրա կազմավորմանը, այնինչ արևելյանի ներկայությունը համարվում է **ձեռքբերովի** ու կողմնակի: Մյուս կողմից՝ հաճախ Հայաստանի ձգտումները բնութագրվում են որպես արևմտյան, խնդիրները՝ արևելյան: Մշակութային, քաղաքակրթական ժառանգականության առումով հայկական ինքնառնչումը մեծագույն մասով Արևմուտքի հետ է: Այդպես է նաև քաղաքականության դեպքում, երբ խոսքը վերաբերում է գարգացման համար ընտրված քաղաքական ուղեգծին: Սակայն աշխարհաբաղաբական ամբողջական ու սթափ պատկեր ուրվագծելիս հայկական «ինքնատեղադրումն» առավելապես Արևելքում է:

5. Եվրոպան ու Եվրոպական կողմնորոշումը հայաստանյան մամուլում հաճախ ներկայանում են որպես **պառակտված քաղաքակրթության խնդիրներ**, որ ուրույն քաղաքակրթություն դառնալու հավակնություններ ունի: Պառակտված քաղաքակրթության

⁴³ Ալ Ջալի, Աղքատ հաս. չի կարող արժ. անգամ... դառը ճշմարտության, «Մունեսիկ», 18 հոկտեմբերի, 1994:

երկրնտրամքների ավելի խորքային բնույթը տեսանելի է դառնում հենց տարբեր դիսկուրսիվ արակտիկաների վերլուծության ժամանակ, երբ ակնհայտ է դառնում նաև տեքստերի բովանդակության ու դիսկուրսների անհամարժեքությունը. արևմտամետ կողմնորոշում առավելապես արևելյան դիսկուրս-կարգերով և արևելյան կողմնորոշում հաճախ արևմտյան դիսկուրս-կարգերով: Մամուլի հրապարակումներում նկատելի այս հակասականությունը խորհելու տեղիք է տալիս դեպի եվրոպա ունեցած քաղաքական-մշակութային ձգտումների ապագայի մասին: Այդ հակասականությունը, սակայն, երբեմն լուծվում է որպես ինքնուրույն քաղաքակրթության հեռանկար:

6. Եվրոպայի հետ հարաբերումը հաճախ կատարվում է որպես ներուճակություն մատնանշելով ազգային ինքնությունն ու խորհրդային տարիների արդիականացման փորձը: Ըստ այսմ՝ խորհրդայինն արժանանում է հակասական գնահատականների՝ որպես պառակտում ազգային հոգեկերտվածքի մեջ և որպես արդիականացման գործոն: Մամուլում քննարկվում է Արևմտյանի հետ առնչվածության մեկ այլ՝ **Ռուսաստանով միջնորդավածության** եղանակը: Քաղաքակրթական շարունակական միջնորդումների քննարկումն առհասարակ էական դրվագ է, որն առավելապես հրապարակախոսական շեշտադրումներով շրջանառվում է մամուլում:

7. Ուշադրության է արժանի եվրոպան **Հայաստանին «հարմարեցնելու» գաղափարը**, որ մամուլում արժարժվում է՝ կապված, օրինակ, տեխնոլոգիաների հետ: Այս տարիների մամուլում տեխնոլոգիաները բավարար կերպով չեն մտանցվում իբրև քաղաքակրթական կերպի կարևորագույն գործոն, ավելին՝ գրեթե չեն մտանցվում: Մի կողմից՝ անտեսվում է տրամադրող երկրի ու տրամադրվող գործիքի կերպերի փոխապայմանավորվածությունը, մյուս կողմից՝ սեփականը մնում է պաթոսի տիրույթում: Այս առումով եվրոպական-հայկական փոխառնչության դիսկուրսի ամենաէական հատկանիշներից է **պաթոսը**:

8. Հայաստան-Եվրոպա քաղաքակրթական առնչումները մամուլում հաճախ տեղի են ունենում **հայապահպանության խնդիրների համատեքստում**: Ցեղասպանված ու հայրենագրկված ժողովրդի համար հիշողության խնդիրը ներկայանում է որպես տեսակի պահպանման խնդիր: Իբրև թեմայի զարգացում խնդրական է դառնում պահպանման և ստեղծման հարաբերության հարցը: Հիշողությունը պարզապես պահելու, պարզապես ցուցադրելու, արվեստի գործի կամ պատմության վերափոխելու երկրնտրամքները մամուլում ոչ հավասարաչափ են քննարկվում: Խորհելու տեղիք է տալիս հատկապես վերջին տարբերակի բացակայությունը՝ **հարցադրման կառուցողական փոխակերպումը**, որ կհամապատասխանի եվրոպական մտածողությանը:

9. Մշակութային հարաբերումը տարբեր երկրների հետ մամուլում ընկալվում է որպես բնական և անտարակուսելի անհրաժեշտություն՝ հաճախ այս կամ այն օտար մշակույթի հետ պատմական ընդհանրությունների շեշտմամբ: Ոլորտում ծավալվող հարաբերություններն ու շփումները, դրանց մասին մամուլի հրապարակումները հատկանշվում են **երկխոսականության ներուժով**՝ թերևս ամենաեվրոպականը աշխարհաքաղաքական կողմնորոշումների առնչվող հրապարակումների դիսկուրսում: Շատ երկրնտրամքներ այստեղ փոխակերպվում են «և... և...» սկզբունքի:

10. Մամուլի հրապարակումներում կարելի է գլոբալացման հանդեպ որոշակի մտավախություն նկատել: Սակայն պետք է փաստել նաև, որ Հին կաղապարներից դուրս գալու միտումն այս տարիների մամուլում մեծ տեղ է զբաղեցնում: Դա կատարվում է որպես գործիքների ու հիմնավորումների զինանոց օգտագործելով հատկապես **գրականությունն ու արվեստը**: Քաղաքակրթության նոր կերպն ու անելիքը որոշարկելիս մամուլը դիմում է մշակույթի զինանոցին՝ արդեն ոչ իբրև ընդհանրական, այլ կոնկրետ բնագավառների հավաքակազմ: **Եվրոպական դիսկուրսներ ներթերվում են գերազանցապես մշակութային տեքստերի միջոցով**:

11. Մշակույթի գերակայությունն ազգային «ունեցվածքի» բոլոր բաղադրիչների համեմատությամբ ներկայանում է նաև որպես **քաղաքական փաստարկ**: Մշակույթի ոլորտում եվրոպայի հետ իբրև հավասարը հավասարի հետ հարաբերվելու մտայնությունն իշխող է հայկական մշակույթի վերլուծություններում: Մշակութային հարմարավետության զգացողությունը հաճախ չեզոքացնում է քաղաքական, տնտեսական, սոցիալական խնդիրները, թուլացնում է դրանց նկատմամբ զգոնության աստիճանը:

12. Ի տարբերություն եվրոպական քաղաքակրթության մշակութային կողմի, որի հետ հարաբերվելիս հայկական դիսկուրսում բացակայում է անհարմարավետության զգացումը, քաղաքակրթության մյուս բաղադրիչների մուտքը հատկանշվում է հակասականությամբ: Մասնավորապես **քաղաքականությունն ու տնտեսությունը** մամուլի առավել բանավիճային թեմաներն են, թեև անկախության առաջին տարիներին ակտիվորեն և հաճախ որոշակի խանդավառությամբ են լուսաբանվում նորանկախ երկրի միջպետական հարաբերությունները: Դրանք քննությունը թույլ է տալիս տեսնել եվրոպա-Հայաստան քաղաքակրթական առնչությունների «գործնական» «կարճ տևողության» պատկերը:

13. Ազատականացող տնտեսության թեման մամուլում ներառում է շերտեր, որոնք բնորոշում են հայկական միջավայրն իբրև **եվրոպական արժեքի հնարավոր զարգացման տարածություն**: Դա տեղի է ունենում քաղաքակրթական որակների շեշտադրմամբ, որոնք առնչելի են ազատ տնտեսավարման սկզբունքի հետ: Այդ առնչություններն ավելի սերտ են, երբ խոսքը մարդկային կապիտալի մասին է, իսկ քաղաքական-տնտեսական հարաբերությունների ոլորտ տեղափոխվելիս դառնում են վիճարկելի՝ ենթարկվելով հասարակական-քաղաքական տարաբնույթ գործոնների ազդեցությանը:

14. Որպես ժողովրդավարական պետության ինստիտուտ կայանալու ճանապարհին մամուլը հաճախ հրապարակում է նյութեր, որոնք բովանդակությունից գատ հետաքրքիր են նաև սոցիալական իմաստի տեսակետից՝ որպես որոշակի «ժեստ»: Քաղաքացու, ընթերցողի միտքը՝ իբրև փոփոխելի, շարժուն կառույց, արդեն կարող է մասնակցել հասարակական զարգացումներին: Մամուլը մի շարք նախաձեռնություններով ներբերում է ցույց է տալիս դրա հնարավորությունը՝ փորձելով **բազմակարծության** հասնել:

15. Եվրոպան մամուլում շրջանառվում է նախ իբրև **ժողովրդավարություն**, ժողովրդավարությունը՝ իբրև **Արևմուտքի հետ երկխոսելու լեզու**: Հաճախ է շեշտվում նաև ժողովրդավարության բնականությունը Հայաստանի համար: Երբեմն արևմտյան արժեքն ու Արևմուտքը չեն ընկալվում իբրև համարժեք ու նույնական: Իրենց ծագմամբ ու բնույթով եվրոպական արժեքները մամուլում շրջանառվում են երբեմն նաև առանց այդ ժառանգականության մշան: Դրանք փոքրաթիվ դեպքեր են՝ տեսական հեռանկարում, սակայն, այդուամենայնիվ լծորդելի արժեքների համատեքստային զարգացման հետ, որտեղ համատեքստը ձևավորված է ձևավորվող հայկականն է:

Ատենախոսության թեմայով հրատարակված հոդվածներ

1. Քաղաքակրթական չափունը՝ անհատական ջանք. Ա. Այվազյանի «Հայություն» թերթը, ժուռնալիստիկա (տեսության և պատմության հարցեր), Երևան, ԵՊՀ հրատ., 2012, էջ 71-82:

2. Ժուռնալիստական ժամանակ և քաղաքակրթական ժամանակ, Պատմության հարցեր, Տարեգիրք 2, համբ.՝ Ա. Ստեփանյան, Երևան, Զանգակ-97, 2013, էջ 172-180:

3. Հայաստան-Եվրոպա քաղաքակրթական առնչություններ: Արվեստի և գրականության մշակութային փաստարկը 1990-ականների մամուլում, Համատեքստ-2013, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 274-282:

Цивилизационные отношения Армения - Европа в армянской прессе первой половины 1990-х годов

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности «Журналистика».

Защита состоится в 14:30 18 марта 2015 г.

на заседании Специализированного Совета ВАК 012 при ЕГУ по адресу: г. Ереван, ул. Абовяна 52/А, ЕГУ, филологический факультет, аудитория 202.

Резюме

В диссертационной работе затрагивается попытка приобщения армянской цивилизации к европейской в армянской прессе первой половины 90-х годов. Остановившись на данном вопросе, появляется возможность проследить как формировалась и какое развитие получила тема, какой потенциал имело новое независимое государство для рассмотрения этих вопросов и предложения решений по ним. С точки зрения средств массовой информации интересно проследить, какое институциональное развитие зафиксировала пресса. Научная новизна работы – анализ цивилизационной и журналистской длительности времени на примере армянской прессы в рамках определенной темы, а также попытка анализа вопроса европейской ориентации посредством дискурса прессы.

Диссертационная работа представляет примечательные связи цивилизационного времени, журналистского времени и дискурса, сознательное применение которых в журналистике позволит иметь дополнительные теоретические инструменты для решения профессиональных задач. Поэтому при анализе мы обратились к **методу дискурс-анализа**, используя элементы методов критического и психологического дискурс-анализов. Применили также иные современные методы и принципы изучения журналистики, в частности методы содержательного рассмотрения, сравнительного, сопоставительного анализов, аналитической психологии и др..

В первой главе диссертации «Цивилизационные измерения и пресса» сделана попытка понять грани соотношения цивилизационной и журналистской длительности времени. В частности, рассмотрение цивилизационных перспектив в армянской прессе демонстрирует возможность изучения армянской прессы с этой точки зрения. Представлены также основные составляющие европейской цивилизации, согласно европейским теоретикам. Подобное ознакомление дает научное представление о европейской цивилизации, следовательно, и возможность более детального рассмотрения ее составляющих в журналистском тексте. Глава состоит из трех подглав: «Журналистское время и цивилизационное время», «Цивилизационные перспективы в армянской прессе первой половины 90-х годов. Пресса как платформа для теории», «Европейская цивилизация».

Вторая глава «Цивилизационные дилеммы» состоит из четырех подглав: «Армения и геополитические предпочтения», «Является ли Армения Европой?», «Цивилизация, утратившая единство», «Армянская память, Армянский вопрос, Европа». Разнообразие тематических составляющих главы свидетельствует о разнообразии цивилизационных дилемм, методов и способов их трактовки. Противоречия заметны не только с точки зрения ориентации, но и с точки зрения дискурса их построения и выражения. В результате возникает путаница противоречий, которые еще более осложняют дилеммы. Пресса предстает как пространство для дискуссии, выражая настроения, царящие в разных

социально-политических кругах. Цивилизационное время в прессе присутствует преимущественно в той мере, в какой о нем задумывается автор статьи. Подлинная журналистская систематизация выражается общим кругом политических курсов, взятых разными газетами, разделяя концепции проправительственных и оппозиционных сторон.

Третья глава «Европейские перспективы» состоит из пяти подглав: «Европа как культурная перспектива», «Европа как политическая перспектива», «Европа как экономическая перспектива», «Европа как перспектива моральной либерализации» и «Институциональные развития европейской прессы». Внедрение европейских дискурсов в постсоветскую армянскую действительность посредством прессы условно можно разделить по отраслям: политическая, экономическая, моральная, институциональная, культурная и т.д. Это, в частности, осуществляется как новая терминология в этих разных отраслях. Если новые политические привнесения преимущественно характеризуются термином «демократия», экономические – «свободный рынок», «приватизация» и т.д., то в случае культуры их можно назвать «западная культура и литература 20-го века». При этом, осторожность по отношению к привнесениям здесь выражается также акцентированием собственной древней культуры. Часто политические смыслы ищутся в исключительно культурных текстах, а политические и экономические курсы объясняются по принципу интересов государства. Европейская демократия и свободный рынок часто встречают отпор со стороны опасений потерять самовластие государства, проигнорировать пройденный в советские годы процесс модернизации, составить бесперспективные планы и др.

В конце диссертации мы, в частности, пришли к заключению, что в исследуемые годы журналистские тексты получают **междискурсивное** качество, что говорит о возможности общественных сдвигов. Любая перспектива, в том числе и европейская, разворачивается в контексте дискуссий о собственном геополитическом положении, которые прямо или косвенно становятся факторами, характеризующими эту перспективу. Дискурс армянской прессы 90-х годов является **дискуссионным**, западным по своему характеру, даже если ставит перед собой дилемму Запад-Восток. Европейские дискурсы внедряются исключительно посредством культурных текстов. В публикациях прессы приобщение к европейской культуре доводится до **участия** в ее создании, в то время как присутствие восточного считается **приобретенным** и второстепенным. С другой стороны, часто достижения Армении характеризуются как западные, а задачи – восточные. По культурному, цивилизационному наследию армянская цивилизация соотносит себя в большей части с Западом. Такая же ситуация и в политике, когда речь идет о намеченном политическом курсе. Однако, если рисовать трезвую геополитическую картину, армянский ассоциативный локус – преимущественно на Востоке.

На пути своего становления в качестве института демократического государства пресса часто публикует материалы, которые помимо своего содержания интересны также с точки зрения социального смысла как определенный «жест». Мнение гражданина, читателя как изменяемое, подвижное строение уже может участвовать в общественном развитии. Пресса рядом инициатив внедряет и демонстрирует возможность этого, пытаясь дойти до плюрализма мнений. Европа в прессе упоминается первую очередь как демократия, а демократия в качестве **языка для диалога с Западом**.

“ARMENIA-EUROPE CIVILIZATIONAL CONNECTIONS IN THE ARMENIAN PRESS OF THE FIRST HALF OF THE 1990s”

Dissertation for the degree of Candidate of Philology in "Journalism" specialty.

Dissertation will be defended on 18 March 2015 at 14:30, at the meeting of the Specialized Council WAC 012 at YSU at Address: Yerevan, Abovyan 52/A, YSU, Faculty of Philology, the audience is 202.

SUMMARY

The dissertation focuses on the attempts made by the Armenian press of the first half of the 1990s to set ties between the Armenian and the European civilizations. Through such kind of reflection it would be possible to follow the processes of the formation and the dynamics of the theme, as well as to identify potential of the newly independent state to discuss and to address a problem. The institutional developments of the press are worth studying in terms of the mass media perspective. The main academic novelty of the work is the study of the Civilizational duration (*Longue durée*) and the Journalistic duration (*Courte durée*) in the press of Armenia based on a particular example, as well as the attempt to analyze the problem of the European orientation in the media discourse. The dissertation tries to conduct correlations among the civilizational duration, journalistic duration and the discourse. As a consequence, their purposeful application in journalistic practice will give additional theoretical instruments for solving professional problems. We have, therefore, chosen the **method of discourse analysis** combined with the tools of critical and psychological discourse analyses. The study has also applied other contemporary methods and principles of research e.g. content analysis, comparative, historical, contrastive analyses, analytical psychology, etc.

In the first chapter of the dissertation – “The Measure of Civilization and The Measure of Press”- we have tried to understand the edges of correlation between journalistic and civilizational durations. The study of civilizational perspectives in the Armenian press is inclined to outline the possibility of studying the Armenian press from that prism.

We have also presented the main components of the European civilization according to European theoreticians. Such background provides a scientific picture of the European civilization, hence allowing to study its components in the journalistic pieces with more scrutiny.

The chapter is divided into three subchapters: “Time of Journalism and Time of Civilization”; “The Civilizational Perspective in the Armenian Press in the First Half of the 1990s: Press as a Platform of Theory”; and “The European Civilization”.

The second chapter – “Dilemmas of Civilization” – has four subchapters: “Armenia and the Geopolitical Preferences”; “Is Armenia Europe?”; “Torn Civilization”; and “The Armenian Memory, The Armenian Question, and Europe”.

The thematic diversity of the chapter speaks about the diversity of the civilizational dilemmas, methods and approaches of their interpretation.

Contradictions are obvious both in the orientations and the discourses of their structuring and expression. The result is knot of contradictions, which further complicate the dilemmas. The press appears as a discussion platform reflecting the dispositions prevalent in the various social and political circles. The time of civilization in the press is present mostly inasmuch as the authors of the articles are concerned with it. The journalistic systemization manifests itself within the general

frameworks of the political positions of various newspapers distributed along the pro-governmental and the oppositional continuum.

The third chapter – “European Perspectives” - has five subchapters: “Europe as a Cultural Perspective”; “Europe as a Political Perspective”; “Europe as an Economic Perspective”; “Europe as a Perspective of Moral Liberalization”; and “Europe and the Institutional Developments of the Press”. The incorporation of the European discourses into the Armenian reality via the post-Soviet Armenian press can be distributed conditionally among the political, economic, moral, institutional, cultural and other spheres. It mostly appears as new terminology brought into the listed variety of spheres. The new entries in the sphere of the politics are predominantly characterized by the term of “democracy”, while in economics they are concerned with the notions of “free market”, “privatization”, etc and in the sphere of culture they refer to the Western art and literature of the 20th century. Though, the cautiousness towards introduction is accompanied by an emphasis on the Armenian ancient culture.

Often civilizational meanings are looked for exceptionally within cultural texts, while the political and the economic vectors are interpreted based on the principle of the state's interest. The ideas of European democracy and the free market are often opposed to the concerns over losing sovereignty, negligence of the modernization achievements of the Soviet period, as well as lack of productivity of the plans.

The dissertation particularly concludes that the journalistic pieces produced during the studied period gradually obtain **inter-discursiveness**, which points to the possibility of social moves. Any perspective, including the European, evolves around the discussions over the Armenian geopolitical situation, with those discussions directly or indirectly becoming factors describing the perspective. The discourse of the Armenian press of the first half of the 1990s is Western-style **polemics** in nature, even when posited within the West-East dilemma. European discourses are introduced predominantly through cultural texts. In the press publications the connections with the European culture extend to the **participation** in its formation, while the presence of the East is seen as **acquired** and foreign. On the other hand, frequently Armenia's aspirations are characterized as western, while the problems – as eastern. In terms of cultural and civilizational legacy, the Armenian self-identification is mostly inclined towards the West.

It is also the same with respect to sphere of politics, when it comes to the political vector chosen for the development of the country. However, when drawing a comprehensive and a sober geopolitical picture, Armenia is to a greater extent “self-localized” in the East. The press, as an emerging institute of a democratic state, often published materials that were also interesting in terms of their social meaning as a certain gesture. The opinion of a citizen and reader as altering and moving structures can constitute a part of social developments. To this end, the press, along with different initiatives, represents and outlines its possibility by **trying to establish pluralism**. Europe in the press is presented, first of all, as **democracy**, and democracy in turn – as a **language of dialogue with the West**.